ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
06.05.2013 թվականին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Գորիս, Հայաստանի Հանրապետություն
Երկու հազար տասնյոթ թվականի սեպտեմբերի ութին

«Արդշինբանկ» ՓԲԸ (գտնվելու վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13 (տասներեք) վարչական շենք», գրանցման վկայական. թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը՝ 25.02.2003թ. (քսանհինգը փետրվարի երկու հազար երեք թվական), այսուհետ՝ **«Վարձատու»**, ի դեմս Վարչության նախագահ Միհեր Գրիգորյանի, որի անունից հանդես է գալիս «Գորիս» մասնաճյուղի կառավարիչ Տիգրան Բարխուդարյանը □Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր. AN 0217121, տրված 27.07.2012թ. (քսանյոթը հուլիսի երկու հազար տասներկու թվական), 032-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն. □Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գորիս, Գ. Նժդեհի փ., տ. 43□□, ով գործում է համաձայն 24.08.2017թ. (Երկու հազար տասնյոթ թվականի օգոստոսի քսանչորսին) տրված № ԻԳ-780-9170 լիազորագրի, մի կողմից, և

Հայաստանի Հանրապետությունը ի դեմս <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի (գտնվելու վայրի և փոստային հասցեն. Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խորենացու 3), այսուհետ՝ **«Վարձակալ»**, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի, ով գործում է հի օրենսդրության, ՀՀ կառավարության 2016թ-ի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշման հաստատված կանոնադրության հիման վրա, որի կողմից 25.08.2017թ-ին տրված թիվ 1/18-1/32789-17 լիազորագրի համաձայն գործում է Գագիկ Հովակիմյանը ծնված 12.07.1963թ-ին (անձնագիր AM0369876 տրված 11.07.2011թ. 032-ի կողմից, հասցե՝ ք. Գորիս Վանքի տափ փողոց, 2 շենք, բնակարան 35) մյուս կողմից,

միասին անվանվելով Կողմեր, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 06.05.2013թ. կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրով Կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս Պայմանագրի 2-րդ կետը փոփոխել, շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2. Սույն Պայմանագիրը գործում է մինչև 30.12.2017թ. (երեսունը դեկտեմբերի երկու հազար տասնյոթ թվականը) ներառյալ:»
2. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում նոտարական վավերացման և սույն համաձայնագրից բխող իրավունքների պետական գրանցման պահից:
4. Կողմերը համաձայնվում են, որ սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 02.06.2017թ.-ից ծագած հարաբերությունների վրա:
5. Սույն համաձայնագիրը ենթակա է վավերացման նոտարական կարգով, իսկ սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման պետական լիազոր մարմնում Վարձակալի կողմից՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձատուի, իսկ համաձայնագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը՝ Վարձակալի կողմից:

6. Սույն համաձայնագիրը Կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից, և Կողմերին պարզաբանվեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գործող նորմերը:
7. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, 4 (չորս) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկական օրինակ կողմերից յուրաքանչյուրին, մեկը վավերացնող նոտարական գրասենյակին, մեկը՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնին: Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:
8. Կողմերի ստորագրությունները.

ՎԱՐՁԱՏՈՒ
«Արդշինբանկ» ՓԲԸ
Լիազորված անձ՝ Տիգրան Բարխուդարյան

ՎԱՐՁԱԿԱԼ
Հայաստանի Հանրապետություն, ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտե
Լիազորված անձ՝ _____

Նոտարական ակտի կոդ: 612-20170908-131-1702469
Նոտարական ակտի գաղտնագիր: 3YZ4GH

երկու հազար տասնյոթ թվականի սեպտեմբերի ութին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝Հայաստանի Հանրապետության Գորիս նոտարական տարածքի նոտար Առնո Գրիգորի Առաքելյանիս կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, ներկայացուցիչների լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:

Սույն համաձայնագրով կատարված փոփոխությունները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրում:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 3724 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Առնո Գրիգորի Առաքելյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6

06.05.2013թ. կնքված 965 գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի փոփոխություն

Քաղաք Երևան << 12 >> դեկտեմբեր 2018թ.

<<Արդշինբանկ>> ՓԲԸ (գտնվելու վայրի և փոստային հասցեն. <<Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորիչի փողոց, թիվ 13 վարչական շենք>>, գրանցման վկայական. թիվ 0394, գրանցման համարը 83, գրանցման ամսաթիվը՝ 25.02.2003թ.) այսուհետ՝ <<ՎԱՐՁԱՏՈՒ>> ի դեմս Վարչության Նախագահ Միհեր Գրիգորյանի, որի անունից հանդես է գալիս <<Գորիս>> մասնաճյուղի կառավարիչ Տիգրան Բարխուդարյանը, մի կողմից, և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (գտնվելու վայրի և փոստային հասցեն. <<Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Խորենացի 3, 7), ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Արտակ Սահակյանի, այսուհետ՝ <<ՎԱՐՁԱԿԱԼ>>, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 06.05.2013թ. կնքված և սեղանամատյանում թիվ 965 համարով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 2-րդ կետը փոփոխել, շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<Սույն այմանագիրը գործում է մինչև 20.12.2018թ. /քսանը դեկտեմբերի երկու հազար տասնութ թվականը/ ներառյալ>>:

2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու /2/ հավասարազոր օրինակներից: Համաձայնագրի մեկական օրինակ տրվում է կողմերին:

5. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>	<<ՎԱՐՁԱԿԱԼ>>
<<Արդշինբանկ>> ՓԲԸ	**ՀՀ կառավարությանն առընթեր**
Հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչի փող.13	**պետական եկամուտների կոմիտե**
ՀՎՀՀ 02566492	**ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7**
Հ/Հ 2470036863310000	**ՀՎՀՀ 02647057**
<<Գորիս >> մասնաճյուղի կառավարիչ՝	**Հ/Հ 900011054013**
	Կենտրոնական գանձապետարան
	Գործառնական վարչություն
	Աշխատակազմի ղեկավար
_____ **Տ. Բարխուդարյան**	_____ **Ա.Սահակյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ «ARDSHINBANK» CJSC 02566492 10163

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

քաղաք Գորիս, երկու հազար տասներեք թվականի մայիսի վեցին

«ԱՐԳՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (գտնվելու վայրը. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 13 վարչական շենք», գրանցման վկայական թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը՝ 25.02.2003թ.), այսուհետ՝ *«Վարձատու»*, ի դեմս վարչության նախագահ Միհր Գրիգորյանի, ով գործում է կանոնադրության և 07.05.2009թ. թիվ 762-Ա հրամանի հիման վրա, որի անունից հանդես է գալիս «Գորիս» մասնաճյուղի կառավարիչ Վլադիմիր Թեոսյանը (անձնագիր. AH 0412343, 26.07.2007թ. 051-ի կողմից, հաշվառված. «Հայաստանի Հանրապետություն, ք. Սիսիան, Զորավար Անդրանիկի 3/5» հասցեում), որը գործում է երկու հազար տասներեք թվականի ապրիլի տասնչորսի (17.04.2013թ.) տրված թիվ ԻԳ-780-512 լիազորագրի հիման վրա, մի կողմից, և **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**, այսուհետ՝ «*Վարձակալ*», ի դեմս **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ** (գտնվելու վայրը. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Խորենացի 3») աշխատակազմի ղեկավար Ա.Գևորգյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության երկու հազար ութ թվականի սեպտեմբերի չորսի թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա, որի անունից հանդես է գալիս Գագիկ Հովակիմյանը (անձնագիր. AM 0369876, տրված 032 կողմից, 11.07.2011թ. հաշվառված. «Հայաստանի Հանրապետություն, ք. Գորիս, Վանքի տափ 2/35» հասցեում), որը գործում է երկու հազար տասներեք թվականի ապրիլի քսանվեցի (26.04.2013թ.) տրված թիվ 5145/18 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

ԲԱԺԻՆ I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրով Վարձատուն վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնել «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Գորիս, Տաթևացու 9» հասցեում գտնվող վարչական շենքի երկրորդ հարկից՝ ըստ սեփականության իրավունքի գրանցման վկայականում նշված հատակագծի, ընդամենը՝ 472.3 /չորս հարյուր յոթանասուներկու ամբողջ երեք տասնորդական/ քառակուսի մետր մակերեսով, տարածքը, այն գբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մասը, այսուհետ՝ «Վարձակալված Տարածք», ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության կողմից օրենքով և կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնելու նպատակով օգտագործելու համար:

2. Սույն պայմանագիրը գործում է մինչև երկու հազար տասնչորս թվականի հունիսի մեկը (01.06.2017թ.) ներառյալ:

3. Վարձակալված Տարածքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, ինչը հիմնավորվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով՝ 2554053 վկայականով, տրված տասնինը հունիսի երկու հազար ինը թվականին (19.06.2009թ) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային ստորաբաժանման կողմից և գրանցված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-003-3-2 մատյանի 0045 համարի տակ:

4. Վարձատուն երաշխավորում է, որ Վարձակալված Տարածքը վաճառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, ինչը հիմնավորվում է ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային ստորաբաժանման կողմից երկու հազար տասներեք թվականի մայիսի երեքին (03.05.2013թ.) տրված No US-03052013-09-0009Անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքով:

5. Կողմերը Պայմանագրի կնքմամբ հաստատում են, որ Վարձակալված Տարածքը Վարձատուի կողմից տրամադրվել (հանձնվել) է Վարձակալին, իսկ վերջինս էլ այն ընդունել է՝ կողմերի կողմից ստորագրված համապատասխան հանձնման-ընդունման ակտով, և Վարձակալված Տարածքի վիճակի վերաբերյալ Վարձակալն որևէ դիտողություններ և առարկություններ չունի:

6. Վարձակալված Տարածքը Վարձակալին տրամադրված (հանձնված) է առանց դրան վերաբերող փաստաթղթերի և պատկանելիքների, բացառությամբ Վարձակալված Տարածքների բանալիների, որոնք նույնպես Վարձակալին տրամադրված (հանձնված) և վերջինիս կողմից դրանք ընդունված են:

ԲԱԺԻՆ II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարձատուն իրավունք ունի՝

7.1 պահանջել Վարձակալից՝ Վարձակալված Տարածքը օգտագործել Պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

7.2. Վարձակալի կողմից վարձավճարը վճարելու ժամկետների խախտման դեպքում նրանից պահանջել մուծելու վարձավճարը.

7.3. եթե Վարձակալը Վարձակալված Տարածքից օգտվում է Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու Պայմանագիրը և հատուցել վնասները.

8. Վարձատուն պարտավոր է Վարձակալին նախազգուշացնել Վարձակալված Տարածքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

9. Վարձակալն իրավունք ունի պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Վարձակալված Տարածքի վիճակը վատթարացել է:

10. Վարձակալը պարտավոր է՝

10.1. Վարձակալված Տարածքն օգտագործել Պայմանագրի պայմաններին և Վարձակալված Տարածքի նշանակությանը համապատասխան.

10.2 ժամանակին մուծել Վարձակալված Տարածքն օգտագործելու համար Պայմանագրի IV բաժնում սահմանված վարձավճարը.

10.3 Վարձակալված Տարածքն պահպանել պատշաճ սանիտարական վիճակում և իր սեփական միջոցների հաշվին կատարել Վարձակալված Տարածքը պահպանելու համար բոլոր անհրաժեշտ ծախսերը.

10.4 իր հաշվին կատարել Վարձակալված տարածքի ընթացիկ վերանորոգումը և կրել Վարձակալված տարածքը պահպանելու ծախսերը.

10.5 ապահովել Վարձակալված Տարածքի պահպանվածությունը, հակահրդեհային կանոնների և անվտանգության տեխնիկայի ՀՀ իրավական ակտերով սահմանված պահանջները.

10.6 Վարձակալված Տարածքի օգտագործման ընթացքում պահպանել իրավական ակտերով սահմանված պահանջները և կանոնները.

10.7 Վարձատուին անմիջապես տեղեկացնել Վարձակալված Տարածքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Վարձակալված տարածքին և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար.

10.8 Վարձատուի ներկայացուցիչներին ապահովել Վարձակալված տարածքի զննման և ստուգման համար անհրաժեշտ հնարավորություն.

10.9 սանտեխնիկական, էլեկտրատեխնիկական և այլ սարքավորումների վթարի նշանումներ հայտնաբերելու դեպքում անմիջապես վերացնել դրանք իր ուժերով և իր սեփական միջոցների հաշվին.

10.10 եթե Վարձակալված Տարածքը իր մեղքով կհայտնվի վթարային վիճակում, ապա վերականգնել այն իր ուժերով և իր սեփական միջոցների հաշվին կամ հատուցել Վարձատուին պատճառված վնասը լրիվ ծավալով.

10.11 Վարձակալված տարածքը Վարձատուին վերադարձնել նույն վիճակով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը, հանձնման-ընդունման ակտով, ամենաուշը Վարձակալության ժամկետի լրանալու օրը.

10.12 Վարձակալված Տարածքում պահպանել սանիտարահակահամաճարակային կայանների, պետհրշեջվերահսկողության մարմինների պահանջները, կանոնները և նորմերը.

10.13 կոմունալ ծառայություններից (էլեկտրաէներգիա, կապ, գազ, խմելու ջուր, ջրահեռացում, աղբահանություն և այլն) օգտվելու դիմաց առաջացած վարձավճարներն անմիջապես վճարել դրանք մատուցող կազմակերպություններին որպես նրանց բաժանորդ՝ կնքելով համապատասխան պայմանագրեր.

10.14 Վարձակալության ժամկետը երկարաձգելու իր մտադրության մասին գրավոր ծանուցել Վարձատուին Պայմանագրի 2-րդ կետում նշված ժամկետից առնվազն 60 (վաթսուն) աշխատանքային օր առաջ:

ԲԱԺԻՆ III. ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Վարձակալված Տարածքը վերադարձվում է փոխանցման մասին հանձնման-ընդունման ակտով:

12. Վարձակալված Տարածքը համարվում է վերադարձված փոխանցման մասին ընդունման-հանձնման ակտի ստորագրման պահից, որը ստորագրման պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

13. Վարձակալված Տարածքի փոխանցման մասին հանձնման-ընդունման ակտը ստորագրում են Կողմերի լիազորված անձինք՝ նրանց մասնաճյուղերի ղեկավարները (կառավարիչները և այլն):

ԲԱԺԻՆ IV. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Վարձավճարը Վարձակալված տարածքի օգտագործման 1 քառակուսի մետրի համար սահմանվում է տարեկան 4.800 (չորս հազար ութ հարյուր) հայկական դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը:

15 Վարձակալված Տարածքի տարեկան վարձավճարի ընդհանուր գումարը կազմում է 2.267.040 / երկու միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար քառասուն/ հայկական դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, որոնք վճարվում են ՀՀ գործող իրավական ակտերին համապատասխան:

16. Պայմանագրի 10.13 կետում նշված կոմունալ ծառայությունների հետ կապված ծախսերը Վարձակալված Տարածքի օգտագործման համար սահմանված վարձավճարի մեջ չեն մտնում:

17. Վարձավճարը Վարձակալը վճարում է Վարձատուին անկանխիկ ձևով՝ բանկային փոխանցմամբ, Պայմանագրի IX բաժնում նշված բանկային վավերապայմաններով:

18. Վարձակալված Տարածքի օգտագործման համար Վարձավճարը փոխանցվում է յուրաքանչյուր եռամսյակ՝ երկկողմ ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, Վարձավճարի տարեկան գումարի 1/4–ի չափով: Վարձավճարը փոխանցվում է Վարձատուին ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, համաձայն Վարձատուի կողմից ներկայացրած հարկային հաշվի, իսկ տվյալ տարվա 4-րդ եռամսյակի համար վճարումն իրականացվում է ոչ ուշ տվյալ տարվա դեկտեմբերի քսանհինգից: Վարձավճարների հաշվարկը սկսվում է երկու հազար տասներկու թվականի մայիսի քսանվեցից (26.05.2012թ):

19. Պայմանագրով նախատեսված վարձավճարի վճարումը դադարում է Վարձակալված Տարածքը Վարձատուին փաստացի վերադարձվելու վերաբերյալ փոխանցման մասին հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

ԲԱԺԻՆ V. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Վարձակալը Պայմանագրի 18-րդ կետում նշված վարձավճարի վճարման կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ չվճարված գումարների 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

21. Եթե Վարձակալը խախտում է Պայմանագրի 10.14 կետում նշված ժամկետը, որի հետևանքով Վարձատուն չի կարողանում մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը ձեռք բերել Պայմանագրի երկարաձգման վերաբերյալ բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, կամ այդպիսի համաձայնությունը ձեռք է բերում Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, ապա Վարձակալը պարտավոր է Վարձատուին հատուցել Կողմերի միջև նոր ժամկետով վարձակալության պայմանագիր կնքելու համար կատարած բոլոր ծախսերը:

22. Վարձակալության պայմանագրով ստանձնած պարտավորություններր չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի նկատմամբ 0,5 տոկոսի չափով:

23. Վարձակալության պայմանագրով սահմանված տարածքի հանձնման ժամկետի խախտման համար Վարձատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չկատարված մասի գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

24. Վարձակալության պայմանագրով նախատեսված՝ Վարձատուի նկատմամբ հաշվարկված տույժերը և տուգանքները հաշվարկվում և հաշվանցվում են Վարձակալին ենթակա վճարման գումարից:

25. Վարձակալված Տարածքը վերադարձնելու ժամկետը խախտելու դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է տուգանք՝ Վարձավճարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

26. Տույժի և տուգանքի մուծումը Կողմերին չի ազատում Պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

27. Վարձակալության պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն Պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

28. Վարձակալության պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա) Վարձակալի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը,

բ) եթե դա Վարձակալի գործողության կամ անգործության հետևանք չէ:

Սույն կետով սահմանված պայմանը գործում է Վարձակալության պայմանագրի 10.14 կետով նախատեսված ժամկետի պահպանման դեպքում:

29. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն Պայմանագրի կնքումը Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վարձատուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Վարձակալն իրավունք ունի միակողմանի լուծել սույն Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն Պայմանագրի կնքում հայտնի լինելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն հիմք կհանդիսանային սույն Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում սույն Պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Վարձակալի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն Պայմանագրի կատարմամբ Վարձակալի ստացածով:

30. Կողմերը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, սահմանում են, որ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև սույն պայմանագիրը կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ սկսած՝ 26.05.2012թ. (երկու հազար տասներկու թվականի մայիսի քսանվեցից):

31. Սույն Պայմանագրով Վարձակալը պարտավորվում է 26.05.2012թ մինչև 01.04.2013թ ընկած ժամանակահատվածի համար Վարձատուի նկատմամբ կուտակված 1,918,324 (մեկ միլիոն ինը հարյուր տասնութ հազար երեք հարյուր քսանչորս) ՀՀ դրամ վարձավճարի գումարի պարտքը վճարել Վարձատուին սույն Պայմանագրի նոտարական վավերացումից հետո 20 (քսան) բանկային օրվա ընթացքում:

ԲԱԺԻՆ VI. ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

32. Վարձակալած Տարածքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

33. Վարձակալի կողմից կատարած Վարձակալված Տարածքից անբաժանելի բարելավումների (ընթացիկ վերանորոգում և այլն) արժեքը չի հատուցվում:

ԲԱԺԻՆ VII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

34. Վարձատուի պահանջով Պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

35.Վարձակալված Տարածքն օգտագործել կամ օգտագործում է Պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

35.2 էականորեն վատթարացրել է Վարձակալված Տարածքի վիճակը.

35.3 Պայմանագրով սահմանված վարձավճարի վճարման ժամկետները լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

35.4 Պայմանագրով սահմանված կարգով չի կատարել Վարձակալված Տարածքի ընթացիկ վերանորոգումը:

36. Վարձակալի պահանջով Պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Վարձակալված Տարածքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի և Վարձակալված Տարածքը չի կարողանում Պայմանագրի 1-ին կետում նշված նպատակայնությամբ օգտագործել:

37. Պայմանագրի գործողության վաղաժամկետ դադարման դեպքում Կողմերը պարտավոր են միմյանց գրավոր ծանուցել Պայմանագրի գործողության վաղաժամկետ դադարման օրվանից՝ առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

37.1. Այն դեպքում, երբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից Վարձատուին Տարածքը վարձակալության տրամադրելու վերաբերյալ տրված համաձայնությունը երկարաձգելու վերաբերյալ համաձայնություն չի տրվում, ապա Վարձատուն իրավունք ձեռք է ձեռք բերում առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցելով Վարձակալին՝ սույն Պայմանագրի վաղաժամկետ լուծման պահանջ ներկայացնել: Եթե նշված ժամկետում կողմերը սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու վերաբերյալ համաձայնագիր չեն կնքում, ապա նշված ժամկետի ավարտից հետո սույն Պայմանագիրը կհամարվի վաղաժամկետ լուծված, իսկ Վարձակալը անհապաղ Տարածքը կվերադարձնի Վարձատուին:

ԲԱԺԻՆ VIII. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

38. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Պայմանագրից վարձակալության իրավունքը ծագում է դրա պետական գրանցման պահից, որը կատարվում է Պայմանագրի կնքման պահից 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

39. Պայմանագիրը կարող է դադարել Կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած ժամկետում, այդ մասին մյուս կողմին առվազն 30 (երեսուն) օր առաջ գրավոր տեղեկացնելով:

40. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները Կողմերը քննարկում են տասնօրյա ժամկետում, որոնց վերաբերյալ, եթե ձեռք է բերվել ընդհանուր համաձայնություն բոլոր էական պայմանների

շուրջ, կնքվում է լրացուցիչ համաձայնագիր: Կողմերի համար լրացուցիչ համաձայնագիրն իրավաբանական ուժ ունի, եթե այն վավերացվել է նոտարի կողմից:

41. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

42. Այն պայմանները, որոնք ներառված չեն Պայմանագրում, կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

43. Պայմանագիրը ենթակա է նոտարի կողմից վավերացման: Պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձատուի կողմից, իսկ վարձակալության իրավունքի պետական գրանցման հետ կապված ծախսերը՝ Վարձակալի կողմից: Եթե Վարձակալի մեղքով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Պայմանագրից ծագած վարձակալության իրավունքը պետական լիազոր մարմնում չի գրանցվում, ինչպես նաև եթե վրա է հասնում Պայմանագրի 22-րդ կետում նշված դեպքերը, ապա դրանցից բոլոր անբարենպաստ հետևանքների ռիսկը կրում է Վարձակալը, այդ թվում նաև նոր վարձակալության պայմանագիր կնքելու հետ կապված բոլոր ծախսերի կատարումը (նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսեր):

44. Պայմանագիրը կնքված է չորս օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, մեկական օրինակ նոտարին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմանը, որին հասանելիք օրինակը տրվում է Վարձակալին, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

ԲԱԺԻՆ IX. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐՁԱՏՈՒ	ՎԱՐՁԱԿԱԼ
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ, ք. Երևան, Գ. Լուսավորչի փող. 13	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
«Գորիս» մասնաճյուղ	
/հասցե, բանկային վավերապայմաններ,	/հասցե, ՀՀ, ք. Երևան, «Խորենացու 3/ Գորիսի ՏՀՏ
ք. Գորիս Գր. Տաթևացի 9	ք. Գորիս Գր. Տաթևացի 9
ՀՎՀՀ 02566492	ՀՎՀՀ 09200199
h/h 2475700659760010	h/h 900281071028, Գորիսի ՏԳԲ
կառավարիչ Լիազորված անձ՝	Լիազորված անձ՝
_____ Վլադիմիր Թևոսյան	_____ Գագիկ Հովակիմյան
Կ.Տ.	Կ.Տ.

Երկու հազար տասներեք թվականի մայիսի _____ սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Գորիսի նոտարական տարածքի նոտար _____ կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղ. օր. 655 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում՝ երեսուն օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 965 ով:
Գանձված է նոտարական տուրք և ծառայության վճար համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների
ԳՈՒՏԱՐ՝



Председатель ГКЧС при Правительстве

Председатель

Секретарь